ծախք է ունեցել և թէ որքան է մնում առ 1 յունվարի 1872 ամի (*).

Աշա վերջացնում եմ խօսքս, ո՛վ բարեկամք և եղբարք իմ, յայտնելով Ձեզ հետևեալ բարենպատակ ձեռնարկութիւնը խորհրդոյն ժողովոյ.

Որովհետև ընկերութեան օրիորդաց ուսումնարանը, տպարանը, գրադարանը նմանապէս և որբոց գիրքը առանձին առանձին տներում տեղաւորվելով Ընկերութեան դրամական միջոցները նուազեցնում են, վասն որոյ կամենալով այս անընդհատ ծախքի առաջը առնել, և ի վերայ այսր ամենայնի ի նկատի ունելով և այն, որ եթէ Ընկերութիւնը սկսէր յիշեալ ուսումնարանի և տպարանի համար նոր ի նորոյ շինութիւններ գնել, հարկաւոր էր մեծ գումար, ուստի խորհուրդը միջնորդութեամբ Թեմական Առաջնորդին Շամախւոյ գրեց առ Վեհափառ Կաթողիկոսն ամենայն Հայոց և խնդրեց, որ Նորին Վեհափառութիւնը բարեհաճի թողուլ Ընկերութեան տեղւոյս Նորաշէն եկեղեցւոյ բակը, որի մէջ կարողանայ շինութիւն առնել. Ստանալով լուծումն ներկայ առաջարկութեանը, Խորհուրդը սկսեց և աշա շուտով կվերջանայ, որպէս և Դուք կարող էք տեսանել նոյն շինութիւնքը. Բաց ի տպարանից և օրիորդաց ուսումնարանից պիտի տեղաւորվին նոցա մէջ նաև Թեմական ուսումնարանը, Գրադարանը, Թանգարանը և Առաջնորդարանը:

Այս շինութեանց համար Ընկերութիւնը նշանակել է իւր գանձարանից և ծախս է արել մինչև ցայժմ 6031 մանէթ, որոց մանրամասն հաշիւը աշա կարող էք տեսնել միւս հաշիւների հետ Պարոն Գանձապետի կարդալու հաշուեթերթերում:

Կարելի է յուսալ, որ յետ այսորիկ Ընկերութիւնը կարող է փոքր ինչ սրտի հանգստութիւն ստացած ապագայում մխիթարվել, որ նա ունի քանի մի ամենահարկաւոր սեպհականութիւններ, որք ժամանակին յառաջը կառնեն այն աւելորդ ծախքերի, որ այժմ կամայ ակամայ գործ է ածում. Այս ուրեմն, կրկնումեմ, յետ այսորիկ Ընկերութիւնը հաստատուն հիմն արկանելով Բագու քաղաքում, յոյս կայ, որ նորա գործունէութեան շրջանը կեդրոնանայ այս տեղ, և անշարժ մնալով չտեղափոխուի ոչ մի պատճառաւ մի այլ քաղաք, տարածելով այս տեղից իւր գործունէութիւնը և բարեգործութիւնը ամենայն տեղ, եթէ Աստուծոյ նախախնամութեամբը նորա դրամական միջոցները ևս աւելի կուժովանան և կտան քաջալերութիւն գործունեայ և բարեբար Անդամներին.

**Մովսէս Սրապիոնեան Օհանջանեանց.**

ի 25 Յունվ. 1872 ամի

ի Բաքու

---

ՑՈՒՑԱԿ

**անուանց և ազգանուանց հիմնադիր և անփոփոխ անդամոց Մարդասիրական ընկերութեան մինչև 1871 թուականը, և նոցա դրամական ընծայաբերութիւնը:**

| | Ռուբլ. |
|---|---|
| Թիֆլիզու բնակիչ հանգուցեալ աստիճանաւոր Ալէքսէյ Յարութիւնեան տէր Ղուկասեանց | 5000 |
| Շուշվայ քաղաքացի Ներսէս Մկրտչեան Կրասիլնիկեանց | 2000 |
| Շուշվայ քաղաքացի աստիճանաւոր Մովսէս Զոհրապեան Զոհրապեանց | 600 |
| Թիֆլիզու բնակիչ հանգուցեալ աստիճանաւոր Դաւիթ Արտեմիչ Ռոստոմեանց | 500 |
| Շուշվայ քաղաքացի Գրիգոր Հայրապետեան Թումայեանց | 500 |
| Շուշվայ քաղաքացի Մուսայէլ Դանիէլեան Հաջգետանեանց | 700 |
| Բագուայ քաղացի հանգուցեալ Սերգէյ Կիրակոսեան Ալչվազեանց | 500 |
| Շամախու քաղաքացի աստիճանաւոր Գէորգ բէգ Պօղոսեան Լալայեանց | 700 |
| Շուշվայ քաղաքացի Յակոբ Իսահակեան Ապրիսեանց | 300 |
| Շուշվայ քաղաքացի Դաւիթ Յովհաննէսեան Աղամեանց | 500 |
| Շուշվայ քաղաքացի Օհանջան Գրիգորեան Հախումեանց | 300 |
| Շուշվայ քաղաքացի Սարգիս Յարութիւնեան Գրիգորեանց | 300 |
| Շուշվայ քաղաքացի Սարգիս տէր Յովհաննէսեան տէր Գրիգորեանց | 700 |
| Շուշվայ քաղաքացի Գէորգ Ամիրումեանց | 300 |
| Հաշտարխան քաղաքացի Գրիգոր Խաչեան Մարտանեանց | 100 |
| Շուշվայ քաղաքացի Գրիգոր Իսահակեան Աղամալեանց | 100 |
| Նուխվայ բնակիչ Գրիգոր Յովհաննիսեան Դիլտարեանց | 100 |
| Շուշվայ քաղաքացի Կարապետ Պետրոսեան Միրզայեանց | 100 |
| Բագուայ քաղաքացի Մկրտիչ Յովհաննիսեան Աղամջանեանց | 100 |

(*) Դրամոց հաշիւը «Արարատ»ը կստանայ Ընկերութեան Գանձապետից.

Թիֆլիզու բնակիչ Յակոբ Աւետիսեան Գրիգորեանց . . . . . . . . . . 100
Բագուայ քաղաքացի Աղասի Իսահակեան Ադամեանց . . . . . . . . 100
Բագու քաղաքացի Զաւատ Մելքումեան Մելիքեանց . . . . . . . . . 100
Բագու քաղաքացի Թադէոս Յովհաննիսեան Մելիքեանց . . . . . . . . . 100
Բագու քաղաքացի Մկրտիչ Կարապետեան Մխիթարեանց . . . . . . 100
Բագու քաղաքացի Աստիճանաւոր Յովհաննէս Կարապետեան Աբրահամեանց . 100
Շուշվայ քաղաքացի Պետրոս բէգ Միքայէլեան Աղամալեանց . . . . . . 100
Շուշվայ քաղաքացի աստիճանաւոր Համբարձում Իսահակեան Հախումեանց . . 100
Թիֆլիզու բնակիչ աստիճանաւոր Լեւոն Գասպարեան Եագուբեանց . . . . . 100
Շուշվայ քաղաքացի Առաքել Աստուածատրեան Տատուրեանց . . . . . 100
Շուշվայ քաղաքացի Յովհաննէս Դաւթեան Ճգնաւորեանց . . . . . . 100
Եզուլխեցի Թովմաս Գաբրիէլեան Ասլանեանց . . . . . . . . . . 300
Թիֆլիզու բնակչուհի Սոֆիայ Միքայէլեան տէր Մկրտչեանց . . . . . . 100
Դզլարեցի հանգուցեալ Գալուստ Աստուածատրեան Իզմիրեանց . . . . . 100
Դարբանդու բնակիչ Սերգէյ Ստեփանեան Կաճկաճեանց . . . . . . . 100
Թիֆլիզու բնակիչ աստիճանաւոր բժիշկ Սողոմոն Յովհաննէսեան Սառաջեանց . 100
Թիֆլիզու բնակիչ Յովհաննէս Անդրէասեան Ղասաբեանց . . . . . . . 100
Թիֆլիզու բնակիչ հանգուցեալ Գէորգ Քեթխուտեանց . . . . . . . . 100
Թիֆլիզու բնակիչ Աստիճանաւոր Նիկողայոս Աղէքսանեան Սաֆարեանց . . . 100
Հաշտարախանու բնակիչ Գրիգոր Խաչատրեան Մանվելեանց . . . . . . . 100
Թիֆլիզու բնակիչ Յովհաննէս Սամսոնեան Վարդիղուլեանց . . . . . . 100
Երեւանու բնակիչ Մուշեղ տէր Եսայեան Մեհրապեանց . . . . . . . . 100
Սղնախու բնակիչ Կոստանդին Յովհաննէսեան Գրիգորեանց . . . . . 100
Բագուայ բնակչուհի Շուշան Վարդանեան Վարդանեանց . . . . . . . 100
Շուշվայ քաղաքացի Յովհաննէս Մկրտչեան տէր Յակոբեանց . . . . . . 100
Շուշվայ բնակիչ Գեներալ Յովհաննէս Դաւթեան Լազարեանց . . . . . 100
Տիկին Աննա Դաւթեան Լազարեանց . 100
Բագու քաղաքացի Սերգէյ Միքայէլեան Կրասիլնիկեանց . . . . . . 100

Շուշվայ քաղաքացի Հայրապետ Գրիգորեան Հախումեանց . . . . . . . 100
Դզլար քաղաքացի Աստիճանաւոր Խաչատուր Եղեան Քանանեանց . . . . 100
Շուշվայ քաղաքացի Անդրէաս Բարայեան Ապրեսեանց . . . . . . . . . 100
Շուշվայ քաղաքացի Աւետիս Սարգիսեան Ղարարէգեանց . . . . . . . . 100
Շամախու բնակիչ Արտէմ Պետրոսեան Ներսիսեանց . . . . . . . . 100
Թիֆլիզու քաղաքացի կնեազ Պօղոս Վասիլեան Արղութեանց . . . . . . 100
Շուշվայ քաղաքացի Մարգարէ Յովհաննիսեան Եարամիշեանց . . . . . . 100
Շամախի քաղաքացի Սերգէյ Միխայէլիչ Վարշամեանց . . . . . . . 100
Շամախի քաղաքացի Թադէոս աւագ քահանայ Բուդաղեանց . . . . . . 100
Շուշի քաղաքացի Յարութիւն Սարգսեան Մատաթեանց , . . . . . . . 100
Շուշի քաղաքացի Սահակ Արզումանեան Մեհրապեանց . . . . . . . . 100
Շուշի քաղաքացի Փանդիլ Հարումեան Մելիք Դատոյեանց . . . . . . 100
Շուշի քաղաքացի Պօղոս Գասպարեան Աղէքսանեանց . . . . . 100
Թիֆլիս քաղաքացի Աստիճանաւոր Խոճլէր պարոն Սարգսեանց . . . . . 100
Թիֆլիս քաղաքացի Ստեփան Սողոմոնեան Թամամշեանց . . . . . . . 100
Թիֆլիս քաղաքացի Զօհրապ Բաղդասարեան Սալամբէգեանց . . . . . . 100
Շամախի քաղաքացի Սաղաթիլ Գասպարեան Թադէոսեանց . . . . . 100
Շուշի քաղաքացի Աղէքսան Յարութիւնեան Ղասապեանց . . . . . 100
Շամախի քաղաքացի Աղէքսան Պօղոսեան Ներսէսեանց . . . . . . 100
Շուշի քաղաքացի Աղէքսան Յովհաննէսեան Օրբէլեանց . . . . . . . 100
Ռափայէլ Գաբրիէլեան Պօպովեանց Բագու քաղաքացի . . . . . . . 100
Բագու քաղաքացի Բարսեղ Գաբրիէլեան Պօպովեանց . *) . 100
Բագու քաղաքացի Մկրտիչ Գաբրիէլեան Պօպովեանց . *) . 100
Բագու քաղաքացի Գրիգոր Թովմասեան Այվազեանց. . . . . . . . . 100
Նիկողայոս Յարութիւնեան Յարութիւնեանց. . . . . . . . . . . 100

---

(*) Այս երկու եղբարք յետ ստորագրութեան հրաժարվեցան ընկերութեան մասնակցութիւնից չհատուցանելով սահմանած գումարը։

Շամախու բնակիչ Յովհաննէս տէր Դանիէլեան Շահնշահեանց. . . . . . 100

Թիֆլիզու բնակիչ Անտոն Սողոմոնեան Լօրղանեանց . . . . . . . . 100

Շամախի քաղաքացի Աստիճանաւոր Հայրապետ Բարխուդարեան Մարտանեանց. . 100

Շուշի քաղաքացի Միրզաբախիշ Բարղամեանց. . . . . . . . . . 100

Շամախի քաղաքացի Աննիբաղ Յարութիւնեան Նաջարեանց. . . . . . 100

Շուշի քաղաքացի Բաշխիբէգ Մարտանեանց. (ապառիկ) . . . . . . 100

Շամախի քաղաքացի Ստեփան Խաչատուրեան Քարամեանց. . . . . . . 100

Շուշի քաղաքացի Արջանգիւղացի Մկրտիչ Քեօչարեան Ղազիեանց. . . . 100

Շուշի քաղաքացի Նիկողայոս Բաբայեան Բահատրեանց (ապառիկ) . . . . . 100

Բագու քաղաքացի Աստիճանաւոր Անդրէաս Սարգսեան Աւետեանց. . . . . 100

Շամախի քաղաքացի Աստիճանաւոր Պետրոս Արէլեան Արէլեանց. . . . . 100

Շամախի քաղաքացի Աւագ Յովհաննէսեան Նաջարեանց. (ապառիկ) . . . 100

Թիֆլիս քաղաքացի Միքայէլ Յարութիւնեան Ստեփանեանց . . . . . 100

Մոսկվայու բնակիչ Ղազարոս Էմմանուէլեան Պրաֆէսօր Լազարեանց . . . 100

Թիֆլիզու բնակիչ Յովսէփ Յարութիւնեան Ռոստամեանց . . . . . 100

Սղնախ քաղաքացի Ստեփան Մարտիրոսեան Լիանազեանց . . . . . . , 100

Ագուլիսեցի Ստեփան Խաչատուրեան Պարսամեանց. . . . . . . . . . 100

Թիֆլիս քաղաքացի աստիճանաւոր Յովհաննէս Յովհաննէսեան Թորոսեանց. , 100

Երևան քաղաքացի աստիճանաւոր Գէորգ Խաչատրեան Շահնազարեանց . . . 100

Շամախի քաղաքացի Սամուէլ Յովհաննէսեան Բաղրեանց . . . . . . . 100

Բագու քաղաքացի հանգուցեալ Զախար Իվանիչ Նազարբէգեանց. . . . . 100

Թիֆլիս քաղաքացի Քարութիւն Բէջանեան Յարութիւնեանց. . . . . . 100

Բագու քաղաքացի Տիկին Նախշուն Խաչատրեան Նազարբէգեանց. . . . . 100

ՀՈԳԵՒՈՐ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑ ԳՈՐՒՈՅ.

---

### Խմբագրութեան Արարատ ամսագրոյ.

Հոգաբարձութիւն Մարիամեան ուսումնարանի Գորւոյ համաձայն Նորին կանոնադրութեան 14 յօդուածոյն առաքելով ընդ սմին Թերթ քննութեան Դպրոցի մուտից և ծախուց և միանգամայն ցուցակ բարերարաց Նորին՝ խնդրում է Արարատ ամսագրոյ միջոցաւ հրատարակել զայնս ի լուր ազգայնոց. և ևթէ ոմանք կարծիքաւոր են բարերարների հրատարակութեանը և նոցա տուած օժանդակութեանը՝ ինչպէս որ այս տեղումն ոմանք կարծիքներով տարածելով Հոգաբարձուաց վրայ որպէս զի նոքա կերած են փողեր, որովհետև Հոգաբարձուներից մինը իւր առևտրական գործոց համար ման գալով անցեալ ամառը Բագու, Շամախի և Մակարիայ՝ մեծ գումար է հաւաքել, այսպէս էլ Քութայիսից եկել է փող ու կերել են, այս պատճառաւ ամեն մարդ իրաւունք ունի բողոքելու Հոգաբարձութեան վրայ Արարատ ամսագրոյ միջոցաւ, որ նա ևս կարողանայ նոցա դէմ պատասխանելու։

Աւելորդ չէ յիշել, որ այս հրապարակական ակտը կարդացուեցաւ համայն տեղւոյս Հայ արանց և կանանց հասարակութեան առաջը փետրվարի 5 ին մեծ հանդիսով, այնպէս որ այսպիսի տպաւորութիւն ժողովրդեան վրայ՝ և ընդհակառակն ժողովրդոց ցցուցած համակրութիւնը դէպի ուսումնարանը նա և նիւթապէս օժանդակելով՝ համարեա քաղաքումս չէ եղած ոչ մէկ ժամանակ։

Հոգաբարձուք Գրիգոր Գուլիշամբարեանց
Ես. Ամիրաղեանց.

ի 6 Մայիսի 1872 ամի
Գորի։

---

ՀԱՇԻՒ

---

ի 5 Փետրվարի 1872 ամի։

Օրիորդական Մարիամեան ուսումնարան Հայոց Գորւոյ ինչպէս յայտնի է ամենեցուն բացուեցաւ ի 4 հոկտեմբերի 1870 ամի հրամանաւ Նորին վեհափառութեան Տեառն Տեառն Գէորգայ Դ. ի ամենայն Հայոց Կաթուղիկոսի, ընդ հոգևոր հովանաւորութեամբ վիճակաւոր Առաջնորդի Թէմիս Վրաստանի և Իմէրէթի իսկական խնամակալութեամբ երից անձանց — Գորւոյ քաղաքացեաց Գրիգորի Գուլիշամբարեանց, Գրիգորի Դաւթեանց, և Եսայեայ Ամիրաղեանց, օգնականութեամբ և գործակցութեամբ երկու վերադիտող քահանայից Տէր Յովհաննէս Տէր Մինասեանցի և Տէր Եղիշէ Տէր Սահակեանցի. Ուսուցիչք և վարժուհիք Դպրոցին են երեք. իսկ աշակերտուհիք 45.

(Մնացեալն է յետոյ)։